## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.aragatsotn@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՄԱՐՏԻ 2021թվականի N 22-Ն

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ, 35-րդ հոդվածի 18-րդ կետերով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Թույլատրել օտարելու Ծաղկահովիտ համայնքի սեփականություն համարվող բնակավայրերի բնակելի և հասարակական կառուցապատման նշանակության հողամասերը.

ա/ Ծիլքար գյուղի 0,12703 հա բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուապատման գործառնական նշանակության հողամաս /ծածկագիր 02-053-0008-0002/, խանութ կառուցելու նպատակով:

բ/ Ծիլքար գյուղի 0,04 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուապատման գործառնական նշանակության հողամաս /ծածկագիր 02-056-0021-0007/, բնակելի տուն կառուցելու նպատակով:

2. Օտարման մեկնարկային գին սահմանել՝

ա/ Ծաղկահովիտ գյուղի հողամասի համար տվյալ հողամասի կադաստրային արժեքի 100% չափով, այն է 1քմ-ը 336,6 /երեք հարյուր երեսուն վեց ամբողջ վեց/ ՀՀ դրամ, հավելաճի քայլը սահմանել հողամասի ընդրանուր արժեքի 5%-ի չափով:

բ/ Ծիլքար գյուղի հողամասի համար տվյալ հողամասի կադաստրային արժեքի 100% չափով, այն է 1քմ-ը 141.9 /մեկ հարյուր քառասուն մեկ ամբողջ ինն/ ՀՀ դրամ, հավելաճի քայլը սահմանել հողամասի ընդրանուր արժեքի 5%-ի չափով:

3. Համայնքի ղեկավարին՝ ապահովել աճուրդի հրապարակայնությունը, նախապատրաստել համապատասխան փաստաթղթեր աճուրդ-վաճառքը պատշաճորեն կազմակերպելու և անցկացնելու համար:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱՐԵԳԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԷԴԳԱՐ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻՇԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԵՎԱԿ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՉԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՆՈՐԱՅՐ ՀԱԿՈԲՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.aragatsotn@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՄԱՐՏԻ 2021թվականի N 23-Ն

## ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 94-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը. ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Թույլատրել Ծաղկահովիտ համայնքի ղեկավարին՝ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը մրցույթային կարգով վարձակալության տրամադրելու համար:

2. Հաստատել վարձակալության տրամադրվող հողակտորների մեկնարկային գները և հավելաճի քայլերը համաձայն աղյուսակ 1-ի:

3. Համայնքի ղեկավարին՝ ապահովել մրցույթի հրապարակայնությունը, նախապատրաստել համապատասխան փաստաթղթեր մրցույթը պատշաճորեն կազմակերպելու և անցկացնելու համար:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱՐԵԳԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԷԴԳԱՐ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻՇԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԵՎԱԿ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՉԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ**

Աղյուսակ 1

# Վարձակալությամբ տրվող հողակտորներ

| Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիր | Նպատակային նշանակությունը, հողատեսքը | Մակերեսը /հա/ | Մեկնարկային վճար /դրամ/ | Յավելաճի քայլը /դրամ/ | Անվանումը | Վարձակալման ժամկետ /տարի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գեղադիր | 02-030-0106-0030 | գյուղ նշանակության վարելահող /3-րդ կարգ/ | 2.68829 | 17000 | 2000 | վարձակալություն | 25 |
| 2 | Գեղադիր | 02-030-0110-0074 | գյուղ նշանակության վարելահող /3-րդ կարգ/ | 1.17134 | 7000 | 2000 | վարձակալություն | 25 |
| 3 | Հնաբերդ | 02-065-0522-0002 | բնակավայրի նպատակային նշանակության/ ընդհանուր օգտագործման | 0.01173 | 5000 | 1000 | վարձակալություն/ կառուցապատման իրավունքով | 60 |
| 4 | Ծիլքար | 02-056-0108-0023 | գյուղ նշանակության վարելահող /3-րդ կարգ/ | 2.13476 | 15000 | 2000 | վարձակալություն | 25 |
| 5 | Ծիլքար | 02-056-0108-0024 | գյուղ նշանակության արոտավայր / | 0.404269 | 5000 | 1000 | վարձակալություն | 10 |

Համայնքի ավագանի ԳԱՐԵԳԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԷԴԳԱՐ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻՇԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԵՎԱԿ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՉԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ

Համայնքի ղեկավար Ն. Հակոբյան

## ՀԱՅԱUՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.aragatsotn@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՄԱՐՏԻ 2021թվականի N 24-Ն

## ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի,18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 90-րդ հոդվածի 4-րդ կետի «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով, ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հավանություն տալ Ծաղկահովիտ համայնքի 2021 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հետևյալ բովանդակությամբ՝

ա/ 900 485 060 033 եկամտային հաշվեհամարի պլանից նվազեցնել 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ եկամուտ,

բ/ 900 485 060 041 եկամտային հաշվեհամարի պլանից նվազեցնել 300 000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ եկամուտ,

գ/ 900 485 060 017 եկամտային հաշվեհամարի պլանից նվազեցնել 29 350 000 /քսանինը միլիոն երեք հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ եկամուտ,

դ/ 900 485 060 280 եկամտային հաշվեհամարի պլանից նվազեցնել 3 000 000 /երեք միլիոն/ ՀՀ դրամ եկամուտ,

ե/ 900 485 060 264 եկամտային հաշվեհամարի պլանից նվազեցնել 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ եկամուտ,

զ/ 900 485 002 217 եկամտային հաշվեհամարին պլանավորել 50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ եկամուտ,

է/ 900 485 002 431 եկամտային հաշվեհամարին պլանավորել 20 000 000 /քսան միլիոն/ ՀՀ դրամ եկամուտ,

ը/ 900 482 109 023 ծախսային հաշվեհամարի 4112 ծախսային հոդվածի պլանից նվազեցնել 7 000 000 /յոթ միլիոն/ ՀՀ դրամ ծախս,

թ/ 900 482 348 019 ծախսային հաշվեհամարի 4657 ծախսային հոդվածի պլանից նվազեցնել 6 000 000 /վեց միլիոն/ ՀՀ դրամ ծախս:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱՐԵԳԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԷԴԳԱՐ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻՇԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԵՎԱԿ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՀԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.aragatsotn@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՄԱՐՏԻ 2021թվականի N 25-Ն

## ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԻԼՔԱՐ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի պահանջներով, համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի սեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով քաղաքացի Գագիկ Բարսեղյանի դիմումը. ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հավանություն տալ Ծաղկահովիտ համայնքի Ծիլքար գյուղում գտնվող քաղաքացի Գագիկ Բարսեղյանի սեփականություն հանդիսացող /ծածկագիր՝ 02-056-0112-0004/0,61324 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության հողամասը փոխելու և դարձնելու որպես բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամաս:

2. ընդունել ի գիտություն, որ առաջարկված հողակտորը հարակից է հասարակական կառուցապատման հողատարածքին և նախատեսվում է կառուցել հասարակական նշանակության օբյեկտ:

3. Համայնքի ղեկավարին՝ սահմանված կարգով կազմել սույն որոշման առաջին կետով նախատեսվող հողամասի նպատակային նշանակության փոփոխման հողաշինարարական գործը և դրան տալ համապատասխան ընթացք:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱՐԵԳԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ
ՀԱԿՈԲՅԱՆ ԷԴԳԱՐ
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻՇԱ
ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԵՎԱԿ
ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ
ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱԶԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱԻՐ ՀԱԿՈԲՅԱՆ**